

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

1789 ԹԻԱԿԱՆԸ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԴԷՍԸ ՊԱՐԻՋՈՒՄ:

Աշխարհքս կառավարում է գաղափարով: Մեծ է այն ոյժը, որը ակօսի նման փորում է գաղափարը՝ մարդկանց և հասարակութիւնների մտքերի և սրտերի մէջ, երբ այդ մարդիկ և այդ հասարակութիւնները ընդունակ են և տրամադիր գաղափարը ընդունելու: Այն երկիրները, որտեղ գաղափարները իշխանութիւն ունին, այնտեղ, ուր պարտականութիւն են զգում՝ թէ մեծը և թէ փոքրը՝ գլուխ խոնարհել յառաջդիմութեան զրօշակի առջև—այդ երկիրները, իրանց այդ հնազանդութիւնով գաղափարի ոյժին—մի տեսակ վերանորոգում են իրանց իրաւունքները՝ շարունակել աշխարհիս վերայ իրանց գոյութիւնը պատուով և փառքով: Հակառակները մնում են քարացած իրանց կուլտուրի մէջ, որովհետև մտքին—գործը չէ հետևում: Իսկ որտեղ գործով չէ արդարացւում դէպի գաղափարն ունեցած համակրութիւնը, այնտեղ կենսական հանգամանքները մնում են նոյնը, ինչ որ էին առաջ. իսկ հին հանգամանքներով գաղափարների արտադրութեան ղուռը մնում է փակւած: Նորանոր գաղափարներ արտադրելու համար՝ պէտք են հանգամանքների փոփոխութիւնների: Հասարակութիւնների և պետութիւնների յառաջդիմական ոյժը երեւում է գաղափարները իրականացնելու մէջ, այսինքն ստեղծել այն հանգամանքները, որոնց մէջ միայն գաղափարի պահանջը կարող է իրագործւել: Վուրճ-ի ընթերցողները անշուշտ հետաքրքրւած կը լինին Վատաստանական վերանորոգման նւիրած յօդւածներով, որ մեր ամառները տւեց իւր առաջին և երրորդ համարներում: Ահա՛ մի գաղափար՝ թէ արդարադատութիւն է պէտք: Բայց արդարա-

դատութիւնը անհնարին է, առանց որ օրէնքը ամենքի վերայ համահաւասար կերպով տարածուի: Արդարադատութիւնը անհնարին է, մինչև որ չը ստեղծեն այն բոլոր կարգերը, որոնցով միայն ապահոված կը լինի մարդու անձնաւորութիւնը և օրէնքով ճանաչած իրաւունքը՝ կամայականութիւններէց: Եւ այն հասարակութիւնը, այն պետութիւնը, որը կարողանում է և վրձնում է, գաղափարը իրագործելու համար, պահանջող կարգ ու կանոնները փոխել, վերանորոգել կամ յեղափոխել եղածը, որը ընդունած աւելի մեծ գաղափարին չէ համապատասխանում,— այդ հասարակութիւնը և այդ երկիրը յառաջդիմական ճանապարհի վերայ են—պատւի և փառքի ճանապարհի վերայ:

Մի երկրի բարոյական ոյժը և առողջութիւնը կայանում է այն չափի ոյժի մէջ, որով նա կարողանում է իրագործել յառաջդիմական գաղափարները և ձուլել սոցա՝ հասարակական կարգ ու կանոնների և հաստատութիւնների մէջ: Բաւական չէ ասել՝ ուսումը պէտքական է, պէտք է ստեղծել ուսումնարան, պատրաստել ուսուցիչներ, օժտել ուսումնարանը ամեն տեսակ հարկաւոր պարագաներով, մշակել ուսման ծրագիրներ, դպրոցական կարգ, մանկավարժական կարգեր և գիտութիւն, դասագրքեր և այլն և այլն: Դորանով միայն գաղափարը կը ստանայ իւր իրաւական ձևը, իւր դալիբը. և դորա մէջ է, որ երևում է հասարակութեան կամքի ոյժը և ոչ միայն գաղափարի իրա մէջ: Բայց միւս կողմից, ստեղծելով նորագոյն դպրոցը, այսինքն այն ձևը, որով իրականանում է յայտնած գաղափարը, այդ իրողութիւնը ինքն իւր կողմից ծնեցնում է նոր պահանջ, որից և ծնւում է նոր գաղափար, որի համար պէտք է աշխատել համապատասխան հասարակական նոր կարգ ստեղծել և այսպէս շարունակ:

Հաւասարութեան գաղափարը մէկն է այն մեծ գաղափարներից, որոնցով սոցորւած էր Ֆրանսիական հասարակութիւնը 18-րդ դարու երկրորդ կիսում: Բոլոր բեֆօրմները, որ պահանջում էր ժամանակը, ենթադրում էր հաւասարութիւն օրէնքի առջև: Բայց այդ պահանջը անւում էր այն ժամանակ, երբ ազգը, Ֆրանսիական ազգը և ոչ միայն Ֆրանսիականը, այլ և բոլոր միւս ազգերը, բաժանւած էին դասակարգերի, որոնցից իւրաքանչիւրը իւր օրէնքն ու-

ներ, իւր առանձին իրաւունքները և իւր առանձին պարտականութիւնները: Ազգը բաժանւած էր կղերական, աղնական և հասարակ դասակարգերի. վերջինը բաղկացած էր՝ քաղաքի ամեն կարգի բնակիչներից և գիւղացիներից: Այդ դասակարգերից աղնականը և հոգեւորականը վայելում էին այն բոլոր արտօնութիւնները, որ նոքա ձեռք էին բերած զանազան ժամանակներում: Իսկ այդ զանազան ժամանակներում կային դարեր, երբ այդ աղնականները և բարձր հոգեւորականները իշխանական դեր էին խաղում: Վերջերքում, 15 և 16-րդ դարերից սկսած, երբ թագաւորական իշխանութիւնը շատ ուժեղացաւ, այնպէս որ աղնականների քաղաքական ոյժը կորաւ և նոցա քաղաքական դերը նսեմացաւ, նոքա այնու ամենայնիւ չը կորցրին իրանց արտօնութիւնները, դարերով ձեռք բերած իրաւունքները հասարակ դասակարգի նկատմամբ: Օրինակ, հողի սեպհականութիւնը պատկանում էր միմիայն թագաւորին, աղնականներին և հոգեւորական դասակարգին. բայց գիւղացին, որը հարիւրաւոր տարիներ շարունակ ժառանգաբար նոյն հողն էր մշակում, չ'ունէր նոյն իսկ իրաւունք հող ձեռք բերելու, իրան սեպհականացնելու: Այո՛, իրաւունքների այդ անհաւասարութիւնը ինքն ըստ ինքեան չէ զարհուրելի. պետական շահը և նոյն իսկ յառաջդիմութիւնը, մի ազգի պատմական որոշ ժամանակներում, կարող են անհրաժեշտ և նոյն իսկ ցանկալի դարձնել իրաւունքների անհաւասարութիւնները: Իրաւունքների անհաւասարութեան վերայ կարելի է կանգնեցնել ամբողջ պետական մարմին, որը հրաշալի յառաջդիմութեան ապացոյցներ կարող է ցոյց տալ: Անգլիան մեզ օրինակ: Բայց այն անհաւասարութիւնները, որ կային Ֆրանսիական դասակարգերի մէջ, անցեալ 18-րդ դարում չէին արդարացւում ո՛չ անհրաժեշտութեամբ, ոչ պետական շահերով, ոչ յառաջդիմութեան պահանջով և ոչ ուրիշ բանով: Մի ժամանակ, միջին դարերում, Ֆրանսիան ներկայացնում էր կուտակումն մանր իշխանութիւնների, թոյլ կերպով կախումն ունեցող թագաւորից: Այն ժամանակ նոցա դիրքը ջոկ էր, որպէս և պարտաւորութիւնները ջոկ էին: Այդ ժամանակներում նոքա, որպէս իրանց հողերի վերայ իշխաններ, իսկապէս իշխանական իրաւունքներ պէտք է ունենային, որովհետեւ իրանց երկրի պաշտպանութիւնը իրանց վերայ էր և ոչ անմիջապէս թագաւորի վերայ. նոքա միշտ պէտք է պատրաստ լի-

նէին թագաւորին զօրք հասցնել, երբ այդ հարկաւոր էր և պահանջուում էր: Նոքա, այդ մանր ֆէօդալական իշխանները, իբրև իրօք իշխաններ, թէպէտ և թոյլ կախումն ունեցող, պարտաւոր էին արդարադատութիւն անել ժողովրդի, այսինքն՝ գիւղացիների համար (այն ժամանակ քաղաքներ նոր-նոր էին սկսում կազմել): Եթէ գիւղացիք պարտաւոր էին մշակող հողերի բերքերից մի մասը տալ այդ իշխանին, դա անարդարութիւն չէր նկատուում, քանի որ դոքա այժմեան պետական տուրքերի նման տուրքեր էին: Իշխանները վայելում էին շատ ուրիշ արտօնութիւններ, օրինակ՝ որսալու իրաւունքը միայն իրանց էր վերապահւած, ջրաղացները միմիայն իշխանական էին և այլն: Այդ բոլորը, ասում ենք, բոլորովին զարմանալի չը պիտի թւի, եթէ ի նկատի առնենք միջին դարերի տէրուական և տնտեսական հանգամանքները:

Մի այդպիսի իշխան ունէր իւր ձեռքի տակ երկիր՝ մեծութամբ մի նահանգի կամ մի քանի նահանգների: Մի այդպիսի իշխանից աւելի ստոր կային ուրիշ աւելի մանր իշխաններ, որոնք նոյն տեսակ պարտականութիւններ ունէին դէպի մեծ իշխանը, որպէս վերջինս՝ դէպի թագաւորը: Բնական է, որ այդ աւելի մանր իշխանները, որոշ պարտաւորութիւններ ունենալով, ունէին նաև որոշ արտօնութիւններ և, ի հարկէ, գլխաւորապէս հողի սեպհականութեան նկատմամբ, քանի որ միջին դարերում հողի մէջ էր բոլոր հարստութիւնը: Այդ ժամանակներում փողը դեռ ևս դործածութեան մէջ զրեթէ չը կար, վաճառական և արհեստաւոր դասակարգեր նմանապէս զրեթէ չը կային:

Ահա՛, այդ ժամանակներում կազմեց մի առանձին կարգ և կանոն, որին տալիս են աւատականութեան կամ ֆէօդալականութեան անուն: Երկրի, ասենք՝ նահանգների, իշխանները, նոքա, որոնք ուղղակի միայն թագաւորից թոյլ կերպով կախումն ունէին, չետադայ ժամանակներում, երբ թագաւորական իշխանութիւնը ամրացաւ և ֆէօդալականները ընկճեցին, կազմեցին ամենաբարձր քրիստոնկրատիան, բարձր ազնւականութիւնը: Ղոքա էին՝ պրինցներ, իշխաններ, մեծ դուքսեր, դուքսեր, մարկիզներ և բարօններ:

Նոցանից աւելի ստոր ազնւականները կազմեցին հասարակ ազնւականութիւնը:

Գիւղացիների այն դրութիւնը, որը ստեղծւեց Ֆէօդալականութեամբ, կոչւում է ճորտութիւն:

Հոգեւորական դասակարգը նման արտօնութիւններ ձեռք բերեց, որպէս ազնւականութիւնը: Հոգեւորականներից մեծերը իշխանական իրաւունքներ ունէին. արքեպիսկոպոսութիւններ և վանքեր կային, որոնք միջին դարերում իշխանութիւններ էին կազմում և յետոյ պահպանեցին իշխանական արտօնութիւնները, թէպէտև զրկեցին քաղաքական իշխանութիւնից—Թագաւորական ուժեղացած իշխանութեան ներքոյ:

Թագաւորական իշխանութեան ուժեղանալը խորտակեց Ֆէօդալների քաղաքական ոյժը և ազատիչ դեր խաղաց գիւղացիների և քաղաքների բնակիչների վերայ, քաղաքների, որոնք ծլեցին և աճեցին, միմիայն 11—12 և յետագայ դարերում: Գիւղացիների և քաղաքաբնակների օգնութիւնով է, որ Թագաւորները կուեցին և ջարդեցին Ֆէօդալականների քաղաքական նախկին իշխանութիւնը—ի մեծ նպաստ յառաջդիմութեան:

Ազնւականները կամաց կամաց դարձան Թագաւորի անմիջական սպասաւորներ, մոռացան գիւղը. բայց Հողի սեպհականութիւնը նրանց ձեռքին էր, նրանց Հողերի վերայ բնակւող գիւղացիները տընտեսապէս նոցանից կախումն ունէին, շարունակելով տալ միջնադարեան տուրքեր Հողատէրերին, որ ազնւականներն էին, վանքերը և բարձր Հոգեւորականները:

Թագաւորութիւնը այսպիսով միացրեց իւր ձեռքի տակ բոլոր նահանգները, Թագաւորը դարձաւ իսկական Թագաւոր, ոչ միայն անունով, այլ և իրական իշխանութեամբ. նա մտցրեց շատ թեթեւութիւններ քաղաքացիների և գիւղացիների վիճակի մէջ:—Բայց և այնպէս, տէրութիւնը կարկատանի նման էր. Հինը, Ֆէօդալական կարգերից շատերը, Հողի սեպհականութեան, դատարանի, քաղաքացիական իրաւունքների նկատմամբ և այլն, շարունակեցին մնալ և այն էլ ոչ բոլոր նահանգներում միատեսակ, այլ զանազան կերպերով, այնպէս, ինչպէս ամեն մի կտոր Հողի պատմութիւնը իւր հետ բերել էր: Օրէնքը, կարգը, կանոնը ընդհանուր չէին, այլ զանազան էին:

Երկրի յառաջդիմութիւնը պահանջում էր արմատական փոփո-

խութիւններ՝ այն հաւասարութեան սկզբունքով օրէնքի առջև, որը իրագործեց Յրանսիան, իսկ նորանից յետոյ Եւրոպայի ցամաքային բոլոր տէրութիւնները, նոցա թւում նաև Ռուսիան: Երկրի միօրինակ կառավարչութիւնը, միօրինակ դատաստանագիրքը, երկրի բնակիչների հաւասար իրաւունքները՝ ապրուստ հայթհայթելու մէջ, հաւասար պարտականութիւնները դէպի պետութիւնը, պետական հարկերի ընդհանրութիւնը, հաւասար ծառայութիւնը զօրքի մէջ, հաւասար իրաւունքները պետական ծառայութեան մէջ առաջանալու և այլն և այլն—այդ բոլորը բղխեց հաւասարութեան սկզբունքից: Հոգը, որ ժառանգական սեպհականութիւն էր ազնւականների և հոգևորականութեան, ազատեց Ֆէօդալական կապանքներից, դառնալով շարժական, առուծախսի առարկայ: Գիւղացիները ազատեցին միջին դարերում հաստատուած, բայց այժմ աւելորդ դարձած և իրանց ծանրաբեռնող տուրքերից նախկին հողատէրերին, որովհետև այժմ իրանք գիւղացիները դառան հողատէրեր: Քաղաքացիները, արհեստավորները ազատեցին համբարական այն օրէնքներից և տրադիցիաներից, որոնք հաստատուել էին, երբ քաղաքները նոր էին հիմնուում, բայց որոնք այժմ խանգարում էին արհեստի ազատութեանը և յառաջդիմութեանը:

Ահա՛ այդ և դրա նման փոփոխութիւններ մտան Յրանսիա 1789 թւականին, գլխաւորապէս օգոստոսի 4-ի գիշերուայ նիստում, որ ունեցաւ Ազգային ժողովը: Այդ նիստում գծագրւեց նաև երկրի խոշորագույն սեփականութիւնը: Այդ Ազգային ժողովը ինքը ստեղծւեց նոյն 1789 թւականին և ստեղծւեց էտա-ժեներօ կոչւած հին Ֆրանսիական ժողովի փոփոխութեամբ, ժողով, որը դադարել էր գումարուել դեռ ևս 1616 թւականից դէսը, բայց որի գումարումը հարկ համարեց թագաւորը 1789 թւականին: Հին կազմով, ժողովը բաղկացած էր մեծ մասով՝ ազնւականների և հոգևորականութեան ներկայացուցիչների և միայն փոքր թւով քաղաքացի և գիւղացի բնակիչների ներկայացուցիչներից: Նորը, Ազգային ժողովը, ներկայացուցիչ էր ազգի և ոչ այս ու այն դասակարգերի: Ազգային ժողովըն էր, որ մշակեց երկրի սահմանադրութիւնը և բոլոր այն օրէնքները, որոնց համադրումարումը հռչակեց որպէս «Յայտարարութեան հարդիւն» իրաւունքների, 4-ին օգոստոսի, 1789 թ.: Առաջին

նիստը Աղգային ժողովի եղաւ 5-ին մայիսի (նոր տոմար) Վերսալում, որը Թաղաւորանիստ քաղաք էր, Պարիզից ոչ հեռու:

Ֆրանսիան ուզեց տօնել այդ տարին, հանդէս բերելով այն բոլոր արդիւնքները, որոնք վկայում են 1789 թ. գաղափարների բեղմնաւորութիւնը իրանց և մարդկութեան համար: Նա սարքեց Համաշխարհային Հանդէս և այն բացեց պաշտօնապէս 5-ին մայիսի:

Շ.